ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՍՏԵՂԾՎԱԾ ԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում և Ադրբեջանի Աղդամի շրջանում հասարակական կարգի պահպանության մարմինների կողմից ձեռնարկվող միջոցները հնարավորություն տվեցին թուլացնել լարվածությունը, թույլ չտալ նոր ընդհարումներ ազգամիջյան հիման վրա:

Կալանված են տների հրկիզումներ կատարած անձինք, առանձին քաղաքացիների մոտից առգրավված է հրազեն ու սառը զենք: Հետաքննություն է կատարվում: Կուսակցական, պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, մասնայական ինֆորմացիայի միջոցները բացատրական աշխատանք են տանում բնակչության շրջանում:

Ինքնավար մարզի գյուղական շրջաններում պահպանվում է նորմալ աշխատանքային ռիթմը: Միևնույն ժամանակ Ստեփանակերտում արդյունաբերական ձեռնարկությունները, շինարարական կազմակերպությունները և ուսումնական հաստատությունները մինչև հիմա չեն աշխատում: Երկաթուղային կայարանում կուտակվել է մոտ 150 չբեռնաթափված վագոն:

Հայկական ՍՍՀ-ի իրավիճակի զարգացման վրա դրականորեն է անդրադառնում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների խորհրդի դիմումը հանրապետության կոմունիստներին և բոլոր աշխատավորներին: Հանրապետական հեռուստատեսությամբ ելույթ են ունեցել Հայաստանի գիտության և արվեստի հայտնի գործիչներ, մասնավորապես ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, որոնք բնակչությանը կոչ են արել հանդես բերել տոկունություն և սթափություն, չենթարկվել անպատասխանատու կոչերին: Աշխատավորական կոլեկտիվների մեծ մասում ըմբռնումով են ընկալում իրավապահ մարմինների կողմից իրականացվող միջոցառումները: Սեպտեմբերի 23-ի առավոտյան աշխատում էր հանրապետության մայրաքաղաքի և մյուս արդյունաբերական կենտրոնների ձեռնարկությունների ու կազմակերպությունների զգալի մասը: Նորմալանում է քաղաքային տրանսպորտի երթևեկությունը:

Դրա հետ մեկտեղ իրադրության կայունացմանը խոչընդոտում են անպատասխանատու տարրերի կողմից Երևանի կենտրոնում կազմակերպվող միտինգները, որտեղ արվում են պրովոկացիոն հայտարարություններ, տարածվում ասեկոսեներ մարդկանց արհեստականորեն գրգռելու նպատակով:

Քաղաքում դրությունը վերահսկվում է:

(ՏԱՍՍ)